

տեղ հայտնաբերվել են շատ արժեքավոր նյութեր: Պեղումներ են կատարվում միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինում:

Այս տարի Գիտությունների ակադեմիան կազմում է գիտա-հետազոտական աշխատանքները արտադրության մեջ արմատավորելու ընդարձակ պլան, ըստ որի նախատեսվում է ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ ներդնել մեր գիտա-հետազոտական ինստիտուտի կողմից ավարտված բազմաթիվ աշխատանքներ: Օրերս Ակադեմիայի նախագահության ընդլայնած նիստը քննության առավ 1950 թվի գիտա-հետազոտական աշխատանքների պլանները, 1950 թվի համար: Գիտությունների ակադե-

միան հետաքալում ավելի կոմեդացնի գիտության և արտադրության կապը:

Հայկական ՍՍՌ-ի Գիտությունների ակադեմիան բռնել է զարգացման լայն ուղի, տարեցտարի ծավալվում են նրա գիտական աշխատանքները, ընդարձակվում գիտական հիմնարկների ցանցը, պատրաստվում է երիտասարդ գիտական աշխատողների հիանալի սերունդ: Մեր Ակադեմիայի այդ առաջընթացը բխում է ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեծ վերելքից, լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունից և ցույց է տալիս մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինի անսահման հոգատարությունը հայ ժողովրդի նկատմամբ:

(«ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ», 1949 թ., հոկտ. 10)

ԻՆՉ ՑՈՒՅՑ ՏՎԻՆ ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Օրերս ավարտվեցին Հայկական ՍՍՌ-ի Գիտությունների ակադեմիայի և Պետական էրմիտաժի հնագիտական միացյալ էքսպեդիցիայի պեղումները Կարմիր բլրում:

Քվադրությունից 8—7 դար առաջ կառուցված ուրարտացիների բերդի մնացորդները: Բլրի հարավային և արևմտյան կողմերում տարածված են ուրարտական քաղաք Թելչե-



Կարմիր բլրում հայտնաբերված սեպագիր արձանագրությունը:

Կարմիր բլուրը, ինչպես հայտնի է, գտնվում է Նրեանից ոչ հեռու, Զանգու գետի ձախ ափին: Այնտեղ պահպանվել են մեր

բախնի ավերակները, որը ներկայումս ՍՍՌՄ-ի տերիտորիայում դառնափոխվող քաղաքներից հնագույնն է:


Կարմիր բլրում պարբերաբար կատարվող պեղումները հետաքրքիր հնագիտական նյութ են տալիս մեզ և հարստացնում մեր գիտելիքները Ուրարտուի՝ արևելյան հնագույն այս պետության մասին, մի պետության, որի հիմքի վրա աճել է հայ ժողովրդի կուլտուրան:

1949 թվին Կարմիր բլրում շարունակվեցին Ուրարտուին կցված հարավային Անդըրկովկասի երկրների ուրարտական փոխարքայի պալատի հետազոտումները: Էքսպեդիցիան հասավ ընդհուպ պալատի կենտրոնական մասին: Պարզվեց, որ պալատի այս մասը երկհարկանի է եղել: Ըստ որում, վեր-

այդ ժամանակի համար երկաթի մշակման շատ բարձր արվեստը Ուրարտուում:

Ընթացիկ տարում էքսպեդիցիայի հիմնական աշխատանքը եղավ անմիջականորեն պալատի կենտրոնական մասին հարող մեծ մանանի մաքրումը, որն ունի մոտ 300 քառ. մետր տարածություն: Մտնանում հայտնաբերվեցին մինչև կեսը գետնի մեջ թաղված 82 խոշոր կարասներ: Բոլոր կարասներն ունեին տարողությունը ցույց տվող նշումներ, որոնցից 20-ի վրա՝ բեռնադիր, իսկ մնացածների վրա՝ հիերոգլիֆներով:

Սկյութների արշավանքի ժամանակ, բերդի կործանման պահին, որ տեղի է ունեցել օ-



Կարմիր բլրում հայտնաբերված դեկորատիվ խոշոր վաճառ:

նահարկի փուլ եկած պատերը զարդարված են եղել հիանալի տաշված բազալտից շինված ոչ մեծ աշտարակներով: Զարմանք է առաջ բերում բազալտի պես կարծր քարի մշակման գերազանց մշակումը. տարակույս չկա, որ նման աշխատանքը կարող էր կատարվել միայն լավ թրծված երկաթե գործիքներով: Հիրավի, հին աղբյուրները մանրամասնորեն խոսում են առաջավոր Ասիայի տերիտորիայում երկաթի լայնորեն տարածված լինելու մասին՝ Ուրարտական պետության հյուսիսային ծայրամասերի բնակիչներին անվանում են պողպատի գյուտարարներ: Հնագիտական նյութերը, մասնավորապես Կարմիր բլրում հայտնաբերված երկաթե գործիքները, նույնպես հաստատում են

գոստոսի առաջին կեսերին (ինչպես այդ որոշակիորեն ցույց տվին անցյալ տարիների պեղումների տվյալները) կարասներն արդեն դատարկ են եղել. դրանցից միայն մի քանիսն են լցված եղել ցորենով, գարով, կոթնկով և քունջութով:

Կարասներից մեկում հայտնաբերվեց մեկը մյուսի մեջ դրված 98-թաւ, մի հանդամանք, որը նպաստել է նրանց զարմանալիորեն անվնաս պահպանմանը: Թասերը պատրաստված են բրոնզից՝ մեծ քանակությամբ արծաթի և անագի խառնուրդով: Ըստ որում, դրանցից մի քանիսը շատ լավ պահպանել են իրենց ոսկեգույն փայլը, հնշունակությամբ: Բոլոր թասերի հատակում կան բեռնադիր մակագրություններ, որոնք ցույց են տա-

լիս, որ դրանք պատկանել են մեր թվականությունից 9—8 դար առաջ ուրարտական վերջին թագավորներին կամ թագավորական բերդերին: Այսպես, դրանցից ամենից ավելի



Կարմիր բլուրում հայտնաբերված սաղավարտը:

աչքի ընկնողը, որ զարդարված է ելուստներով, ունի «Մարդուրի սեփականություն» լակոնիկ մակագրությունը: Բացառիկ անվթար վիճակում պահպանված նման ուրարտական կերտվածքների մեծ քանակությունը պահպանվելը, անկասկած, հազվագյուտ է և երջանիկ մի դեպք է հանդիսանում հնագիտության մեջ:


Շենքի կենտրոնում հայտնաբերվեց կավաշեն մի զոհասեղան:

Մառանի կենտրոնում փայտաշեն կտուրը պահելու համար կանգնեցված են չթրծված աղյուսե սյուներ, որոնք զարդարված են բարձրորակ բազմերանգ որմնաքանդակներով: Դժբախտաբար, մեզ հասած ուրարտական որմնաքանդակության այս միակ նշույնները

շատ վատ են պահպանվել, և կավային շերտաձևի ման բոլոր որմնանկար կտորները հայտնաբերվեցին արդեն փուլ եկած, ջարդված մանր փշուրներով: Մառանում գտնվեցին նաև հին կյանքը պատկերող առանձին մանր առարկաներ՝ երկաթե գործիքներ, կավե կանթեղներ, պարաններ կտորներ, պոկված և գետին ընկած կավե մի կախովի բուլլա՝ բեռագրանման կարճ մակագրությամբ և կնիքների դրոշմներով:

Մեծ մառանի պեղումներից բացի, այս տարի աշխատանքներ կատարվեցին նաև պալատի մյուս շինություններում՝ նախապատրաստելով դրանք հետագա հետազոտության համար: Այս պեղումների շնորհիվ հայտնագործվեցին նմանապես հետաքրքիր առարկաներ, որոնցից հիշատակության արժանի է եղջյուրից դրվագումով զարդարված մի աթոռակի բրոնզե և արծաթե մասերը և բավական լավ պահպանված բեռագրերով կավե մի տախտակիկ, որը պատկանում է բերդի արխիվին:

Կարմիր բլուրում պեղումները կշարունակվեն մի քանի տարի ևս: Պետք է հուսալ, որ դրանք նույնպես նոր և հարուստ նյութ



Կարմիր բլուրում հայտնաբերված բրոնզյա 98 թափերից մեկը:

կտան մեք երկրի անցյալը, մասնավորապես հին արևելյան Ուրարտական ստրկատիրական պետության ուսումնասիրության համար:

Բ. Բ. ՊԻՏՐՈՎՍԿԻ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի անդամ-թղթակից («Կոմունիստ», 18 նոյեմբերի 1949 թ.):